ի դարս եւ ի ժամանակս յայտնեալ։ Եւ որպէս յանկարծակի պատահեցաւ քեզ փորձանակրութիւնդ՝ դարձեալ հաւատասցես զի յանկարծակի հասցէ քեզ յոգնութիւն յորում ժամու դու ոչ կարծես երբեք, բայց հաւատա՛ եւ մի՛ թերահաւատիր, բայց յուսա՛ եւ մի՛ երկմտիր։ Ո՞չ ապաքէն գոչէր Յոբ. Աչք քո յիս եւ ես ի դժոխս իցեմ. գոչեա՛ եւ դու ըստ Դաւթի թէ՝ Դարձ Տէ՛ր եւ փրկեա զանձն իմ եւ մի՛ ըստ անօրէնութեան իմում հատուցաներ ինձ։ Զի չեմք մոռացեալ ի Տեառնէ եւ ոչ որպէս զանօթ կորուսեալ. զի ոչ յաւիտենից մերժէ զժողովուրդ իւր եւ ոչ ի սպառ արգելու զողորմութիւն իւր ի մէնջ եւ ոչ մոռանայ գթալ զմեզ Աստուածն մեր։ Եւ դու որ զգիրս սուրբս գիտես, որ կարողն են զքեզ իմաստուն առնել, զի ամենայն ինչ ի վարդապետութիւն մեր գրեցաւ, եւ ի միտ բեր զաստուածուսոյց մաղթանք Տեառն մերոյ որով խրատէր զհաւատացեալս իւր ասելով. Յորժամ կացջիք յաղօթս՝ ասասջիք Մի՛ տար զմեզ ի փորձութիւն այլ փրկեա ի չարէն։ Եւ դու ամենայնիւ խրատեալ խելամուտ լիցիս եւ զարթնուցուս որպէս ի քնոյ՝ դարձուցանելով զուշ քո ի քեզ եւ ճանաչիցես զտէր Աստուած քո, զի եւ նա զարթնուցու ի վերայ քո գթութեամբ որպէս զհզօր զի թափէ զգինի առ ի բժշկութիւն ցաւոց քոց, եւ արագահաս լիցի առ ի փրկել զքեզ ի բանտէդ՝ լսելով զհեծութիւն կապելոյդ եւ արձակել զորդիդ որպէս մահապարտի, եւ յանկարծօրէն քեզ ի խաւարիդ լոյս ծագեսցէ որպէս եւ բազմից արար, զոր ընթեռնումք, եւ որպէս եւ բազմիցն իսկ եղեաք ականատեսք։ Վասն որոյ խնդրեմք զի Տէր լիցի ձեռնտու ցուցանել զճանապարհ կենաց եւ լուսոյ, որ է ինքն լոյս եւ կեանք։ Եւ այսու մխիթարեսցիս եւ զվախճան ելից քոց յուսով ի տէր Աստուած քո հաստատեսցես, զի Տէր մերձ